# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ԱՄՍՀ - ԳՀԾՁԲ -20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

գ. Խաչփար «30» դեկտեմբերի 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միկինյան

- Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Հայրապետյան, Ռ. Հովհաննիսյան
- Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ռաֆայելյան

**1. Հայտարարություն գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են հայտարարության և հրավերի տեքստերի հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ռեքվիեմ ինտերնեշնլ» ՍՊԸ | ք. Երևան, Մարգարյան 6 |
| 2 | «Մասիսի բնակարանային տնտեսություն» ԲԲԸ | Արարատի մարզ, ք. Մասիս, Երևանյան 69 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**3. Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու սահմանված կարգին համապատասխանության մասին**

3.1 Հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման պայմաններին համապատասխանող հայտ են ներկայացրել «Ռեքվիեմ ինտերնեշնլ» ՍՊԸ-ն և «Մասիսի բնակարանային տնտեսություն» ԲԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**4.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

5.1 Մասնակիցների կողմից առաջարկված գինը պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն է.

Չափաբաժին 1 Խաչփար համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերում

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Պայմանագրի համար առաջարկվող գները | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Ռեքվիեմ ինտերնեշնլ» ՍՊԸ | 3 000 000/ երեք միլիոն/ | 0 | 3 000 000/ երեք միլիոն/ |
| 2 | «Մասիսի բնակարանային տնտեսություն» ԲԲԸ | 1 220 000/ մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար/ | 0 | 1 220 000/ մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար/ |

Գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքում նոր գին չձևավորվեց:

5. Հիմնավորումներ ստանալու վերաբերյալ

Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ ստանալու առաջարկ չի եղել:

Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի բացման արդյունքում գնային առաջարկների հիման վրա՝ 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Մասիսի բնակարանային տնտեսություն» ԲԲԸ-ին:

Սահմանված կարգով ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. ՄԻԿԻՆՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ Կ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌԱՖԱՅԵԼՅԱՆ